

## Մ. Փորթուգալյան և Ա. Արփիարյան հարաբերությունները նոր լույսի ներքո

Մարգարյան Ս. Թ.

առաջատար գիտաշխատող, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)

sargsyansuren@yandex.ru

**Հիմնաբառեր՝** Արևմտյան Հայաստան, նորահայտ նամակներ, ազգային-ազատագրության գաղափարախոսություն, կենդանի վավերագրեր, թուրքական բռնատիրություն, նախաձեռնողներ, վստահելի աղբյուր

### Отношения М. Португальяна и А. Арпиаряна в новом свете

Саргсян С. Т.

Институт истории НАН РА (Ереван, Армения)

sargsyansuren@yandex.ru

**Аннотация.** Письма, написанные друг другу первооснователями идеологии западноармянской национально-освободительной борьбы, инициаторами патриотической работы по выводу армянского народа из многовекового застоя Мкртичем Португальяном и Арpiarом Арпиаряном - живые документы и надежный источник времени и событий, а также изучений идеологических общностей и противоречий между ними.

В этих новооткрытых письмах приверженцы идеи самопомощи подчеркивали, что для того, чтобы избавиться от турецкой диктатуры, необходимо перевоспитать молодое поколение, привить ему либеральные идеи, а также объединить все возможные национальные силы вокруг идеологии освобождения.

**Ключевые слова:** Западная Армения, новооткрытые письма, национально-освободительная идеология, живые документы, турецкой диктатура, приверженцы, надежный источник

### Relations between A. Arpiaryan and M. Portugalian in a New Light

Sargsyan S. T.

Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)

sargsyansuren@yandex.ru

**Abstract** The letters addressed to each other by Mkrtych Portugalyan and Arpiar Arpiarian, pioneers of the ideology of the Western Armenian national liberation struggle and initiators of the awakening of the Armenian people from centuries of stagnation, are living documents and a reliable source for studying the historical period and events of interest, as well as ideological communities and disagreements between them.

In the recently discovered letters, the adherents of the idea of self-help emphasized that in order to free themselves from Turkish violence, it is necessary to educate the younger generation in a new way, introduce freedom-loving ideas, as well as to rally all national forces around the idea of liberation.

**Keywords.** Western Armenian, discovered letters, national liberation struggle, living documents, Turkish violence, initiators, reliable source

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ իրենց արժանավոր տեղն ունեն այդ շարժման գաղափարական ակունքներում կանգնած և հայ ժողովրդին դարավոր ընդարմացումից դուրս բերելու ազգանվեր գործի նախաձեռնողներ Մկրտիչ Փորթուգալյանը և Արփիար Արփիարյանը: Ապրելով արևմտահայերի համար բախտորոշ մի ժամանակաշրջանում՝ նրանք ականատես եղան սուլթանական աննախադեպ բռնություններին ու հայ ժողովրդի հանդեպ սկսված անմարդկային հալածանքներին: Ինչպես նաև մի շարք առաջադեմ և հայրենասեր մտավորականների թվում Բեռլինի վեհաժողովից հետո հասկացան, որ թուրքական հալածանքների սաստկացումը ոչ

թե միջոց էր արևմտահայերի ինքնավարության ձգտումը խափանելու համար, այլ թուրքերի կողմից հայակործան ծրագրերի իրականացման սկիզբ: Նրանք հանգեցին այն եզրակացությանը, որ արևմտահայությունն իր ազատագրության հույսը պետք է կապի ոչ միայն եվրոպական երկրների օգնության հետ, այլ նախ և առաջ հենվի սեփական ուժերի վրա, որի համար նրանց կարծիքով հարկավոր էր նախ և առաջ զոյացնել այդ ուժը:

Ինքնօգնության գաղափարի նվիրյալները գտնում էին, որ ազատագրական պայքարում անհրաժեշտ էր նորովի կրթել մատաղ սերնդին, ներարկել նրան ազատատենչ գաղափարներ, ինչպես նաև՝ ազատության գաղափարի շուրջ

համախմբել ազգային բոլոր ուժերին: Նրանք մեծ ջանքերի ներդրումով կապեր հաստատեցին, արևմտահայության ազգային խնդիրներով մտահոգեցին և այդ գործում ներգրավեցին նաև արևելահայությանը: Լինելով առաջադիմության ջերմ պաշտպաններ՝ իրենց համախոհների հետ նրանք սուր պայքար ծավալեցին հայ կղերա-ամիրայական դասի հետադիմական գաղափարների դեմ, մամուլում և ազգային ժողովի ամբիոնից քննադատեցին պոլսահայ վերնախավի ստրկամտությունն ու հաշտվողականությունը, ինչպես նաև հոգևորականության շրջանում տեղ գտած արատավոր երևույթները:

Մի խումբ համախոհների հետ նրանք ձեռնամուխ եղան «Արարատյան ընկերության» ստեղծմանը, որը գավառահայության շրջանում ծավալելով կրթական ազգանվեր գործունեություն, նպատակ էր հետապնդում լուսավորության տարածման միջոցով արթնացնել ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրա միջից դուրս մղել ստրկամտությունը և դաստիարակել նրան ազգային-ազտագրական պայքարի ոգով: Հետագայում ազգային փրկության նվիրյալների ուղիները թեև գաղվեցին, բայց հիմնականում նրանք հավատարիմ մնացին իրենց հավատամքին:

Մ. Փորթուգալյանն իր ազգափրկիչ գաղափարներով անցավ Վասպուրական աշխարհի և Վանում հիմնեց վարժարաններ, որոնք դարձան ազգային-ազատագրական գաղափարախոսության տարածման քուրաներ: Իրեն համախոհ Մ. Խրիմյանի հետ նա եղավ նաև մի քանի հեղափոխական գաղտնի խմբակների կազմակերպական նախաձեռնողն ու գաղափարական սերմնացանը: Հենց այդ գործունեության լուսապսակը եղավ նորովի մտածող երիտասարդության ձևավորումը և հայ իրականության մեջ առաջին՝ Արմենական կուսակցության ստեղծումը: Մակայն նրա այդ հայրենասնվեր գործունեությունն աննկատ չմնաց և թուրքական բռնապետական համակարգը հալածանքներ սկսեց նրա նկատմամբ: Խուսափելով ձերբակալությունից Մ. Փորթուգալյանը հեռացավ Կ. Պոլիս, իսկ այնուհետև՝ Ֆրանսիա: 1885 թվականից Մարսել քաղաքում սկսեց հրատարակել «Արմենիա» թերթն ու մինչև կյանքի ավարտը՝ քարոզեց ազատախոհական գաղափարներ [9; 10; 13]:

Հասարակական-քաղաքական և կրթամշակութային ասպարեզի նվիրյալների ու հայ ազտախոհական հրապարակախոսության այդ ռահվիրանների մասին գրվել են զգալի թվով ուսումնասիրություններ [3; 5; 9; 10; 13]: Թեև Ա. Արփիարյանին նվիրված մի քանի, հիմնականում գրականագիտական [2; 6; 7; 8; 12], իսկ Մ. Փորթուգալյանի գործունեության մասին պատմագիտական հիմնարար աշխատություններ են գրվել, սակայն նրանց միջև եղած հարաբե-

րություններին, որոնք հիմնականում արտացոլված են նրանց իրար հասցեագրված նամակներում, այդ ուսումնասիրություններում որևէ անդրադարձ չկա:

Սովորաբար անվանի, տաղանդավոր, ազգային, քաղաքական և մշակութային գործիչների նամակները յուրաքանչյուր կոնկրետ ժամանակի ազգային մշակութային կյանքի կենդանի վավերագրեր են: Անվիճելի է, որ դրանց խորագին ուսումնասիրությունն ընդլայնում է գիտական հորիզոնների տեսադաշտը և նպաստում միջդիսցիպլինար գիտությունների զարգացմանը: Մանավանդ, երբ խոսքը վերաբերում է թե՛ գրողի ու լրագրողի, թե՛ մշակութային ու քաղաքական գործիչների Էպիստոլյար<sup>1</sup> ժառանգությանը: Պատմագիտական առումով արժեքավոր նամականի ունեցող անհատները մեզանում քիչ չեն (Թումանյան, Իսահակյան, Շանթ, Ադրայան, Տերյան և այլք): Հայ ազգի պատմության ու ճակատագրի բերումով ինչպես ազատագրական գաղափարախոսության շատ նվիրյալների, հասարակական-քաղաքական գործիչների, գրողների ու արվեստագետների, այդպես էլ Մկրտիչ Փորթուգալյանին ու Արփիար Արփիարյանին, նույնպես վիճակված չէր ծառայել միայն իրենց գրչին ու գործին: Նրանք երբեմն իրենց կամքից անկախ էին հայտնվել ազգային քաղաքական կյանքի հորձանուտում և հաճախ՝ ընդդիմանալով ի բնե ստեղծագործողի իրենց կոչմանն ամբողջությամբ ծառայելու նվիրական ցանկությանը, հանգրվանել էին այնտեղ:

Ընդհանրապես պատմագիտության ուսումնասիրության համար անգնահատելի է ոչ միայն մեծերի, այլև առհասարակ նամականու նշանակությունը: Նամականու ուսումնասիրությունը այնպիսի հետազոտական եղանակ է, որի շնորհիվ թե՛ գեղարվեստական ստեղծագործությունը, թե՛ պատմությունն ու ժամանակը դիտարկվում են կոնկրետ շրջանի մտավոր սերուցքը հանդիսացող անհատների աշխարհընկալման, տվյալ դեպքում գրողի ու քաղաքական գործչի ինչպես գեղագիտական - փյխոփայական, այնպես էլ ազգային – քաղաքական

<sup>1</sup> «Էպիստոլյար» բառը հունարենից թարգմանված «նամակ» նշանակում է «տառ», գեղարվեստական գրելու մշակույթ: Ընդհանրապես, ժանրը, սկզբում լինելով բանավոր արվեստի մի մաս, կառուցվել է հռետորաբանության օրենքների վրա և ենթարկվել դրա ոճական նորմերին: Ըստ այդ կանոնների, նամակները բաժանվում էին ըստ թեմաների: Էպիստոլյար կապը օգտագործվում էր լրագրողական ժանրում, ինչպես նաև հին հույն իմաստունների միմյանց ուղղված փիլիսոփայական հարցրդագրություններում: Հաճախ նման տեքստեր գրելու որոշակի դժվարության պատճառով մարդիկ օգնության համար դիմում էին Էպիստոլյար ժանրի ոլորտում անհրաժեշտ հմտություններ և տաղանդ ունեցող դպիրներին: Ժամանակակից Էպիստոլյար ժանրի առանձնահատկությունը նրա ծայրահեղ պարզության և գեղարվեստական մինիմալիզմի մեջ է:

հեռանկարների մասին մոտեցումների համատեքստում: Նշանավոր անհատների նամականու ուսումնասիրման գրավչությունը մերօրյա հետազոտողի համար հասկանալի է հատկապես պատմության ամօրեականությունը բացահայտելու առումով: Այս իմաստով իրենց թեմատիկ և բովանդակային, գրականմշակութային ու հասարակական-քաղաքական նշանակության առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Ա. Արփիարյանի և Մ. Փորթուգալյանի նամակները: Քանի որ, երբ խոսքը նամակների մասին է, տեղեկատվական դաշտի հավաստիությունը կասկած չի հարուցում, մանավանդ երբ խոսքը վերաբերում է XIX դարի 80-ական թվականների հասարակական-քաղաքական և ազգային-գրական այնպիսի շրջանի մասին, որտեղ վերջիններս ժամանակի կենտրոնական դեմքերից էին: Իսկ որ նրանց միջանձնային, գաղափարաբանական, հասարակական-քաղաքական ու հրապարակախոսական հարաբերություններին վերաբերող շատ հարցեր կարող են լուսաբանման և դա ժամանակը ճիշտ ընկալելու և լուսաբանելու հարուցում անկասկած օգտակար կլինի: Հատկապես որ, հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսական ճակատի այդ երկու նվիրյալները տևական ժամանակ համախոհներ են եղել և նրանց աշխարհայացքներում ընդհանրությունները բավականին շատ են: Ներկա հոդվածն այդ բացը լրացնելու փորձ է:

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ռահվիրաններ Ա. Արփիարյանի ու Մ. Փորթուգալյանի մոտեցումները շատ ընդհանրություններ ունեն: Ա. Արփիարյանը ոչ միայն գրող էր, ժամանակի ռեալիստական շարժման, իրապաշտական դպրոցի կարկառուն ներկայացուցիչը, այլև մի քանի թերթերի խմբագրապետը: Տևական ժամանակ նրա շուրջ համախմբված էր արևմտահայ մտավորականության սերունդը: Արփիարյանը մտերիմ էր հատկապես նշանավոր մտավորականներ Լևոն Բաշալյանի, Երվանդ Օտյանի և Մկրտիչ Փորթուգալյանի հետ: Նրանց միավորում էին և՛ ազգային, և՛ լուծման ու կարգավորման սպասող շատ հրատապ խնդիրներ:

Ա. Արփիարյանի և Մ. Փորթուգալյանի միջև եղած բարեկամական հարաբերությունները հստակ երևում են հատկապես իրենց ապրած ժամանակաշրջանի կապի հիմնական միջոցնամակագրության մեջ: Դրանց միջոցով նրանք մշտապես կապ են պահպանել իրար հետ: Պահպանված նամակների քննական ուսումնասիրությունը և այդ երկու հեղինակների գրելու ինտենսիվությունը հիմք են տալիս ենթադրելու, որ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այդ նամակների մեծ մասը չեն պահպանվել և մեզ չեն հասել: Սակայն ԳԱԹ-ի «Արփիար

Արփիարյան» ֆոնդում մեր կողմից հայտնաբերած նամակներից անգամ մի քանիսը լավագույնս նպաստում են պատկերացում կազմել հիմնահարցի մասին:

Այդ նամակների ուշադիր ընթերցումը հանգեցնում է այն մտքին, որ՝

ա) արևմտահայ երկու նշանավոր հրապարակախոսները լինելով նույն միջավայրում ծնված և մեծացած անձինք իրենց գործունեության հատկապես առաջին շրջանում շատ հարցերում նույնակարծիք են եղել,

բ) երկուսն էլ ազատագրական պայքարը պատկերացնում էին նույն զարգացման մեջ: Նախ՝ կրթամշակութային գործունեությամբ ժողովրդին դուրս բերել դարավոր ընդամացումից, ապա նախապատրաստել նրան ազատագրական պայքարի:

Ավելի ուշ թեև ազգային հիմնախնդիրներին վերաբերող նրանց մոտեցումներում որոշ տարբերություններ նկատվեցին, սակայն հիմնականում նրանք մինչև վերջ էլ մնացին գաղափարական համախոհներ:

Հակիրճ ներկայացնենք այդ նամակներից երկուսը, որոնք լույս են սփռում ազգային փրկության ծրագրի այդ երկու նվիրյալների հարաբերությունների մասին:

Արևմտահայ արձակագիր, հրապարակախոս, գրական քննադատ և խմբագիր Ա. Արփիարյանը բարձր գնահատելով Մ. Փորթուգալյանի կարողություններն ու ազգաշահ գործունեությունը, ձգտում էր նրան մտերմացնել նրա երբեմնի սաների՝ արմենականների հետ, որպեսզի մեկտեղվեին նրանց հայրենամեղ ջանքերը: 1899 թ. փետրվարի 4-ին Ալեքսանդրիայից Մ. Փորթուգալյանին հասցեագրած նամակներից մեկում խոսելով արմենականների մասին և փորձելով նրանց հաշտեցնել իրենց ուսուցչի հետ, նա գրում է. «այս բոլոր երիտասարդները հստակ գաղափար ունին Հայաստանի վիճակին վրայ, ողջմիտ խորհուրդներ տալու նշմարիտ հայրենասերներ են, ու պիտի կրնան օգտակար ըլլալ ազգային դատին» [1]: Այնուհետև նամակում նա Փորթուգալյանին հիշեցնում է, որ իր Մարսելում եղած ժամանակ նրան ասել է. «Ձեր եւ իրենց միջեւ սերտ յարաբերութիւն մը, կրնայ արդիւնաւոր ըլլայ» [1]:

Կ. Պոլսում Հնչակյան կուսակցությանն անդամագրված առաջին սերնդի ներկայացուցիչ Ա. Արփիարյանը Մ. Տամատյանի և մի խումբ այլ համախոհների հետ մերժելով սոցիալիզմի գաղափարախոսությունն ու չհանդուրժելով Նազարբեկյան ամուսինների մենատիրությունը կուսակցությունում, ընդվզեցին և 1896 թ. ստեղծեցին Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: Գործելակերպի նկատմամբ որոշ տարակարծությունների հետևանքով վերակազմյալները ևս երկատվեցին: Ավելի արմատական

և գործելամիջոցների մեջ տարբերություններ չդնող խմբառաջնորդն էր Վահե Արզույանը: Ավելի ուշ՝ 1900-1901 թթ. նրա ազդեցությունը Վերակազմյալ հնչական կուսակցությունում աննախադեպ մեծանում է: Վ. Արզույանը հանդուրժող և գրական-հրապարակախոսական գործունեությանն ավելի մեծ դեր հատկացնող Ա. Արփիարյանի հակառակորդն էր և ամեն ինչ անում էր նրան չեզոքացնելու համար: Չդիմա-նալով վերջինիս տարատեսակ խարդավանք-ներին՝ 1901 թ. հունվարի 15-ին Արփիարյանը վերջնականապես թեև հեռանում է կուսակցու-թյունից, սակայն շարունակում է խմբագրել «Նոր կեանք» և «Մարտ» պարբերականները<sup>2</sup>: Սակայն շարունակելով ճնշումները և օգտա-գործելով իր ազդեցությունը՝ Արզույանը 1901 թ. մայիս 15-ին «Նոր կեանքի» խմբագրությունը հանձնում է Սուրեն Պարթևյանին:

Այդ խարդավանքներից վերջնականապես հիասթափված և ստեղծված այդ ծանր իրա-վիճակից ընկճված Ա. Արփիարյանը հեռանում Լոնդոն և 1901 թ. օգոստոսի 20-ին այնտեղից Մ. Փորթուգալյանին մի նամակ է հասցեագրում: Այդ նամակում նա տեղեկացնում է, որ «Նոր Կեանքի խմբագրական ծրարին փոփոխության պատճառով այլևս այդ հանդեսին խմբագրին պաշտոնը իմ վրաս չէ մայիսին ի վեր: Այժմ ես մտադիր եմ Իտալիա անցնիլ և նոր ամսաթերթ մը հիմնել» [1]:

Ավելի ուշ, Ա. Արփիարյանը բնակություն է հաստատում Վենետիկում: Այստեղ վերլուծելով իր անցած ուղին և ազատագրական պայքարի առջև ծառայած խնդիրները՝ Ա. Արփիարյանը գրում է. «Սակայն պահ մը կը խորհիմ, փոխա-նակ շարունակ նորանոր հրատարակություններ երևան բերելու արդիօք աւելի օգտակար չլլայ որ ուժ տալ արդեն գրական ունեցողներուն, զանոնք զորացնել, և աւելի ... (օգտակար) գործ մը անիլ: Այս խորհրդով կուզէի Ձեր կարծիքն առնիլ թէ արդիո՞ք հնարաւոր է որ ի հարկին Արմենիայի շուրջը բոլորինք» [1]:

Այնուհետև նամակագիրն ընդգծում է, որ «պարզապէս կարծիքներու փոխանակութիւն ընել կը փափագի առանց ունէ ցանկասիրու-թեան» և եթե սկզբունքորեն Փորթուգալյանը չի առարկում իրենց համագործակցութեանը, Արփիարյանը նրա «նկատառութեանը կը յանձ-նարարեմ» իր մոտեցումներն այդ հարցի վերաբերյալ:

1. «Արմենիայի բացարձակ խմբագիր-ատենապետ կը մնաք դուք:

2. Ընդհանուր ուղղութեան վրայ ունէ իրաւունք չեմ ուզեր ստանալ: Իմ հրատարա-կութիւններու պատասխանատուութեանը միայն

կատանձնեմ: Ունէ յօդուածներ եթէ թերթին ընդհանուր ուղղութեանը համաձայն չգտնէք կարող էք չհրատարակել:

3. Ինչ ինչ սկզբունքներու, անձերու, թեր-թերու մարմիններու վերաբերյալ նպաստաւոր, աննպաստ կամ չեզոք դիրք մը բռնելու մասին համակամօք կըլլամ:

4. Նոր կեանքի 3 տարուան խմբագրական ուղղութիւնը, որքան որ այ բոլորովին անկախ չէր, բայց եւ այնպէս Ձեզի գաղափար մը տուած է անշուշտ իմ ուղղութեան վրայ, ուղղութեան մը այնպէսոր նյութերու մէջ զգալապէս չտարբերի Ձերիններէ՝ հետեւաբար անուղղելի դժվարու-թիւններ ստեղծելու վտանգ մը չեմ տեսնիր» [1]:

Իսկ ամենավերջում նամակագիրը փորձելով իր օգտակարությունը բերել թերթին ու դրա խմբագիր Փորթուգալյանին, նշում է, որ «Խմբագրական իրաւունքներուն եւ ուղղութեան մասին» այսքան խոսելուց հետո կանդրադառնամ ևս մի քանի ոչ պակաս կարևոր կետերի՝

1. «Արմենիան փոխանակ շաբաթը մեկ կամ երկու հրատարակելու, ամիսը 3 անգամ հանել. 1ին. 10ին, 20ին, «...ւանէն կրկին ....ամիսը. փոխանակ մեկ ..... Միասին» (նամակի այս հատվածներն անընթեռնելի են):

2. Այս ..... օգտակարութիւնը աւելի .... կը բացատրեմ .... մը»...

Յավոք, նամակի որոշ հատվածներ վնասված են և ոչ ընթեռնելի, սակայն ընդհանուր առմամբ հեղինակի ասելիքը պարզ է՝ նա ցանկանում էր համագործակցել Մ. Փորթուգալյանի հետ, օգտագործել խմբագրի հեղինակությունն ու նրա «Արմենիայի» հնարավորությունները և շարունակել իր անմնացորդ նպաստը բերել հայ ազգային-ազատագրական պայքարին:

Նշենք նաև, որ այս նամակները կենդանի վավերագրեր են և միանգամայն վստահելի աղբյուր ժամանակն ու հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալների միջև եղած գաղափարական ընդհանրություններն ու ներհակություններն ուսումնասիրելու գործում: Ինչպես նաև ուսանելի շատ դրույթներ են պարունակում:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Արփիար Արփիարյանի ֆոնդ, թիվ 106:
2. **Ավագյան, Հ.** Արփիար Արփիարեանի սպանու-թիւնը: – Կահիրէ, 2018:
3. **Գալէմբեար, Չ.** Մկրտիչ Փորթուգալեան, Քառա-սուն տարուան աշխատաւորը, Կենսագրական գծեր: – Կ.Պոլիս, 1914: - 155 էջ:
4. **Թէքեան, Վ.** Անձնական յիշատակներ Մ. Փորթու-գալեանի կեանքէն: – Կ.Պոլիս, 1914:

<sup>2</sup> Այս երկու պարբերականների մասին ավելի մանրամասն տե՛ս [11]

5. **Թորոսեան, Պ.** Ով է Մկրտիչ Փորթուգալեան: – Կ.Պոլիս, 1912:
6. **Հակոբյան, Ս.** Արփիար Արփիարյան: Կյանքն ու գրական գործունեությունը: – Վիեննա, 1922:
7. **Հովհաննիսյան, Գ.** Արփիար Արփիարյան. Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը: – Ե., 2019: - 277 էջ:
8. **Մուրադյան, Լ.** Արփիար Արփիարյան: Կյանքը և ստեղծագործությունը: – Ե., 1991:
9. **Սարգսյան, Ս.** «Արմենիա» պարբերականը ազատագրականգաղափարախոսության ակունքներում: – Ե., 2014:
10. **Սարգսյան, Ս.** Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը և «Արմենիա» պարբերականը: – Ե., 2018:
11. **Սարգսյան, Ս.** Վերակազմյալ հնչակյան մամուլի պատմությունից («Մարտ», «Նոր կյանք») // ԼՀԳ, թիվ 2, 1995, էջ 107-115:
12. **Ստեփանյան, Գ.** Արփիար Արփիարյան: – Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1955: - 289 էջ:
13. **Саргсян, С.** Периодическое издание «Армения» у истоков армянской национально-освободительной идеологии. – Москва, 2015:

*Տժնա/Հանձնվել է՝ 20.07.2021*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 26.07.2021*

*Принята/Ընդունվել է՝ 30.07.2021*